Մեր մամուլը 20–էն սկսեալ մինչեւ այսօր ու վաղն ալ հաւատացած է ու թիկունք կը կանգնի Հայաստանի ներկայ իրականութեան՝ հպարտ հայրենիքի ներկայ իրագործումներով: Սակայն երբեմն, զանազան առիթներով, ան չէ հրաժարած բարեացակամ դիտողութիւններ եւ ի հարկին քննադատութիւններ ընելէ, երբ պէտքը նկատած է դրական ոգիով մօտեցուած բարեկարգումներու: Հայաստանը, այսօր, մեզի՝ արտերկրի հայութեան համար, կը մնայ միակ կռուանը հայապահպանումի աշխատանքներուն մէջ: Առանց Երեւանի լուսապայծառ իրականութեան, գոյութիւն ունենալէ շատոնց դադրած պիտի ըլլային հայատրոփ ու հայահոծ Պէյրութն ու հայաքնակ Լոս Անճելըսը: Առանց հայրենի մշակութային ներարկումներուն դատապարտուած են անշքանալու Թէքեան Մշակ. Միութիւնը, Հ.Ե. Ընկերակցութիւնը, Նոր Սերունդ Մշակ. Միութիւնը եւ մշակութային միւս կազմակերպութիւնները: Առանց մշակութային սիրալիր փոխյարաբերութեանց, մենք գոյութիւն ըլլալէ կը դադրինք: Ժամանակաւոր ենք պարզապէս:

Հայաստանը Ռամկավար Ազատական մամուլին համար կը մնայ լոյսի այն միակ աղբիւրը, ուրկէ միշտ ճառագայթած է հայրենասիրութիւն:

Ռամկավար Ազատական մամուլը առաջին օրէն սկսեալ եղած է կողքին սրբութիւն սրբոց Ս. Էջմիածնի: Կը հաւատայ որ միայն հոգեւոր մեր կեդրոնը կրնայ հոգեւոր դաստիարակութիւն բաշխել ժողովուրդին ու ցուցմունք տալ եղբայրական սիրոյ՝ նուի-

(Շար. էջ 7)

Հայկական Ջարդերու Մասին Թրքական Փաստաթուղթ Մը

Ստորեւ մեր թարգմանութեամբ հայ հասարակութեան ուշադրութեան յանձնուածը հայկական ջարդերը հաստատող արժէքաւոր փաստաթուղթ մըն է, որ ներկայիս կը գտնուի Մեծն Բրիտանիոյ Պատերազմական Նախարարութեան մօտ (106/1420 թիւ 937):

Անգլիական դեսպան՝ Հորըս Ռամպոլտ գայն 28 Դեկտեմբեր 1917 թուակիր եւ 30862 թիւ ընկերակցող նամակով մը Զուիցերիոյ մայրաքաղաք Պեռնէն ղրկած է Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարար Արթհըր Ճէյմզ Պալֆուրին, (1848–1930), որ երեք տարի վարչապետ ալ եղած է (1902–1905):

Քեմալ Միտհաթ Պէյ պետն էր Թուրքիոյ ընդդիմադիր «Իթիլաֆ» (Համաձայնութիւն) կուսակցութեան, այն շրջանին, թէ Թուրքիոյ կառավարութեան ղեկը կը գտնուէր «Իթթիհատ վէ Թերաքքը» (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) բռնակալ կուսակցութեան ձեռքը, գլխաւորութեամբ ջարդարարապետ Թալաաթ, Էնվէր եւ Ճեմալ փաշաներու:

Խնդրոյ առարկայ փաստաթուղթը ֆրանսերէն է:

Իթիլաֆ կուսակցութեան անդամ Գաբրիէլ Է. Նորատունկեան Ա.Համաշխարհային Պատերազմէն առաջ, քանի մը տարի Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարն էր: Ցետագային ան եղաւ Հ.Բ.Ը.Մ-ի փոխ նախագահը:

(Կիպրոս) Կ.Ն.Փափազեան

* * *

Հորըս Ռամպոլտի Նամակը Արթհըր Ճէյմզ Պալֆուրին

Ձեզի կը փոխանցեմ հրապարակային յայտարարութեան մը բնագիրը, զոր Քեմալ Միտհաթ Պէյ կը մտադրէ շուտով հրատարակել զուիցերիական մամուլին մէջ: Յայտարարութիւնը կը ջատագովէ հաշտութիւն մը թուրքերու եւ հայերու միջեւ, եւ որ իրականութեան մէջ կոչ մըն է վերջիններուն գործակցելու Քեմալ Միթհատ Պէյի կուսակցութեան հետ, ձաղկելու նպատակով «Երիտասարդ Թուրք» վարչակարգը:

* * *

Հրապարակային Յայտարարութիւն Մեր Հայ Հայրենակիցներուն

Ծուրջ քառասուն տարիէ խենդութեան հով մը կը փչէ Թուրքիոյ վրայ, կուրացնելով անոր երիտասարդ եւ ծեր կառավարողները, զանոնք հրելով դէպի անզուգական զայրոյթի եւ աննկարագրելի կործանումի: Ջարդերն ու ամէն կարգի դալաններ փոխարինուած են խաղաղութեան եւ ներդաշնակութեան այս դարը, որուն մէջ կ'ապրէինք 600 տարի՝ փոխադարձ եղբայրակցութեան մէջ -դուք՝ հայերդ եւ մենք իսլամ թուրքերս:

Ձեզի՝ հայերուդ -հաւատարիմ, օրինապահ եւ օգտակար քաղաքացիները կայսրութեան- Թուրքիա պարտական է այն գերագոյն ծառայութեանց համար զորս մատուցած էք որքան տնտեսական եւ առեւտրական նոյնքան ալ անոր մտաւորական եւ արուեստագիտական զարգացումին:

Ներկայիս, բախտախնդիրներու խմբակ մը, որ կը կոչուի «Երիտասարդ Թուրքեր», իշխանութիւնը կը կազմէ Պոլսոյ մէջ եւ զայն հոն պահելու համար, օրական կը դիմէ ամենէն արհինարբու միջոցներու, երբե՛ք չտեսուած, նոյնիսկ Ապտիւլ Համիտի իշխանութեան օրով:

Եւ մենք եղած ենք անզօր ականատեսները զգուելի բնաջնջումին մեր հայ եղբայրներուն, զորս այս յելուզակները աքսորեցին եւ փոշոտեցին հարիւր հազարներով:

Արդարացնելու համար այս ոճիրները, Թուրքիոյ ներկայ կառավարութիւնը հրատարակած է հայերու դէմ շնական սուտերու գրքոյկ մը: Կիները ու մանուկները փոշոտելէ ետք անհրաժեշտ էր հնարել մեղադրանքներու շարք մը դժբախտ հայ ժողովուրդին դէմ:

Եթէ մաս մը գրգռիչներ կային հայերու մէջ, կառավարութեան պարտականութիւնն էր փնտռել եւ պատժել զանոնք, համաձայն երկրին կանոններուն. բայց քանի մը յեղափոխականներու պատճառով աքսորեցին, խողխողեցին, թալանեցին, խեղդամահ ըրին աւելի քան մէկ միլիոն խաղաղասէր, անմեղ հայեր: Ասիկա անորակելի արարք մըն է, զոր մենք ազատասէր եւ իրական հայրենասէր թուրքերս կը դատապարտենք մեր ամբողջ ուժով եւ զոր մեր կրօնքը կը մերժէ կորովի կերպով:

Հայե՛ր,

Հալածուեցաք եւ ջարդուեցաք որովհետեւ արդարութիւն ուզեցիք, որովհետեւ պահանջեցիք ապրիլ ապահովութեան մէջ եւ երաշխաւորութիւն՝ ձեր ինչքերուն համար: Եւ մենք՝ ազատամիտ թուրքերս, միթէ մենք նուազ չափով մը չե՞նք ենթարկուած ձեր ճակատագրին՝ նոյն իտէալին համար:

Ուստի, կը հաւատանք, այսօր նուիրական պարտք մը հատուցանել յայտարարելով քաղաքակիրթ աշխարհին որ դուք՝ հայերդ միշտ եղած էք հաւատարիմ եւ օրինապահ հպատակները Օսմանեան Կայսրութեան:

Հայե՛ր,

Մինչեւ հիմա անարդարօրէն նահատակուած էք: Մենք միայն կը խնդրենք վստահեցնել ձեզ՝ ապագային համար, որ դուք իրաւունք ունիք այս ազատութեան, ինչպէս մենք՝ իսլամ թուրքերս ունինք, նոյնպէս ալ բոլոր օսմանցիները՝ առանց բացառութեան: Հալածուած ենք նոյն պատճառով, պէտք ենք միանալ նոյն դատին համար, որպէսզի կրկին տապալենք մեր հարստահարիչներու բռնակալութիւնը:

Օրինապահութեամբ եւ անկեղծօրէն ձեզի կ'երկարենք մեր ձեռքը, որ չէ արատաւորուած որեւէ աղտով: Անվարան եւ անվախօրէն ընդունեցէք այս ձեռքը, միացնելու մեզ մեր հասարակաց ճիգին մէջ, շուտով ապահովելու համար մեր իտէալին իրականացումը.

«Մեր ազատութիւնը եւ մեր ազգային բարգաւաճումը:

Վասն Օսմանեան
«Խաղաղութիւն եւ Ազատութիւն» Լիկայի
Գլխաւոր Ատենադպիր Քեմալ Միտհաթ
(Ժընեւ)

Ընկ. Օհան Պոտրումեանի Ելոյթը

(Շար. էջ 6-էն)

րական մեր բոլոր աթոռներուն ու թեմերուն: Մեր մամուլը կը հաւատայ, թէ Ս.Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետը գլուխն է Հայաստանեայց Եկեղեցիին: Ան հոգեւոր առաջնորդն է մեր դարաւոր Եկեղեցիին: Ոչ մէկ անջատողական շարժում կրնայ դիմանալ աւանդական այն հսկայ ուժին դիմաց, զոր դարերով ամբարած է Աստուածընտրեալ մեր Հոգեւոր Կեդրոնը:

Մեր մամուլը, որպէս հարազատ արտայայտիչը մեր կազմակերպութեան, միշտ պիտի մնայ օրինապահ զաւակը Մայր Աթոռին իր արժանի յարգանքը մատուցելով նաեւ նուիրապետական մեր միւս թեմերուն: Պիտի շարունակէ նաեւ գրել ու պայքարիլ վասն մեր Եկեղեցւոյ միութեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գերագոյն իշխանութեան տակ, թեմերու վերադարձին եւ կարգ ու կանոնի վերահաստատման:

1906-էն սկսեալ, այսօր ալ, Ռամկավար Ազատական մամուլը իր էջերը լայն բացաւ Հ.Բ.Ը. Միութեան գործունէութեան առջեւ: Միութիւնը իր հիմնադրութեան օրէն սկսեալ եղաւ օրհնաբեր այն բարեսիրական միակ համապարփակ կազմակերպութեան:

Մեր մամուլը, եւ անոր միջոցով հաւատաւոր ընթերցողները ու շարքայինները կը հաւատան, թէ Հ.Բ.Ը.Միութիւնը արտասահմանի մեծագոյն ոչ-քաղաքական կազմակերպութիւնն է, թէ անոր իտէալներն ու համոզումները ազգային սկզբունքային խնդիրներու մէջ նման են Ռ.Ա. Կուսակցութեան առաջադրանքներուն, թէ այս միութիւնը ունի այն հզօր բարոյական ուժը՝ միասնականացնելու արտասահմանի թափառական հայութիւնը:

Մեր մամուլը, այսօր ալ, իր էջերը լայն կը բանայ Բարեգործականի գործունէութեանց առջեւ Բարեգործականի դպրոց, Բարեգործականի ակումբ, Բարեգործականի դարմանատուն, հանդէս պարախումբ... միշտ երեւցած են մեր թերթերուն մէջ, որովհետեւ Բարեգործականի հեռատես ղեկավարութիւնը, հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայէն սկսեալ, հաւատացած է ու կը հաւատայ մեր կուսակցութեան սրբազան առաքելութեան: Բարեգործականը քաջ գիտէ թէ իր տագնապի օրերուն միակ քաղաքական կազմակերպութիւնը, որ եղբայրաբար հասած է անոր կանգնումի աշխատանքներուն, մեր կուսակցութիւնը եղած է՝ նաեւ իր մամուլով:

Եւ այս ամենէն ետք, Ռամկավար Ազատական մամուլը կը հաւատայ Հայ Դատի հետապնդման սրբազան գործին:

Կը հաւատայ թէ մեր ժողովուրդը ունի չլուծուած Դատ մը, որ աւելի քան 75 տարիներէ ի վեր կը սպասէ արդար լուծման: Հայ ժողովուրդը իրաւատէրն է իր հողերուն: Մեր մամուլը եւ իր ետին կեցող Ռ.Ա.Կուսակցութիւնը կ'ուխտէն ամէն միջոց գործածել վերատիրանալու համար մեր պատմական հողերուն: Քաղաքական, տնտեսական, դիւանագիտական ու քարոզչական բոլոր միջոցներով՝ ի խնդիր ազատագրման մերք պիտի աշխատինք առանց վհատելու, առանց դոյզն յուսահատական նշան մը ցոյց տալու՝ վերատիրանալու համար մեր առհաւական իրաւունքներուն:

Մեր աւագ պարտականութիւնը այս է. մնացեալ բոլոր աշխատանքները միջոցներ են մեզի համար հասնելու այս հրագին:

Կարեւոր Հանդիպում՝ Պրն. Յովսէփ Եուսէֆեանի Հետ

Արժանթինահայ երեւելի անձնաւորութիւններէն, ազգային անսակարկ ծառայութեան նուիրուած, պարկեշտ ու ժրաջան դէկավար՝ Պրն. Յովսէփ Եուսէֆեան երկար տարիներու ընթացքին վարած է բարեգործականի, տեղւոյս մասնաճիւղին, տաճնապետութիւնը եւ այլ պատասխանատուութիւններ:

Անչեղ ու բոլորանուէր հայրենասէր, ան, ցարդ մաս կը կազմէ Հ.Ռ.Ը.Մ.-ի կեդրոնական վարչութեան, եւ առ այդ կը չարունակէ աչխատիլ անձնուիրութեամբ, ի խնդիր՝ հայապահպանումի ու Հայ եկեղեցւոյ պայծառացումին, հաւատարմօրէն Մայր Հայրենիքի ու Մայր Աթոռ Ս.Էջմիածնին, որոնց ջերմ ու անդրդուելի պաչտպանողներէն է: Յաճախ մասնաւոր հրաւէրով, ազգօգուտ առաքելութիւններ կատարած թէ՛ արտասահմանի տարբեր հայ գաղթօճախներու մէջ, թէ՛ Մայր Հայրենիքի մէջ, մասնակցութիւն բերելով համահայկական համագումարներու: Վերջերս, իբր տեղւոյս Միջ-Միութենական Խորհուրդի (A.I.A.) ներկայացուցիչներէն, ան մասնակցեցաւ 1915-ի Մեծ Եղեռնի 75-րդ ամեակին նուիրուած՝ միջազգային գիտաժողովին որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, Ապրիլի 17-էն 20-ը, կազմակերպութեամբ՝ Հայկական Մ.Մ.Հ. Գիտութիւններու Ակադեմիային, ուր ունեցաւ կարեւոր ելոյթ մը, Միջ-Միութենական Խորհուրդին անունով:

Գտնուելով հայրենի հողին վրայ, Մեծ Եղեռնի 75-ամեակի պաչտօնական հանդիսութիւններու չրջանին, ան մաս կազմեց Միածեռնակաբերդի յուչարձանին առջեւ, իրենց յարգանքի տուրքը մեր 1,5 միլիոն նահատակներուն մատուցող կէս միլիոն հայրենաքնակ թէ արտերկրի մեր ժողովուրդին:

Այցելեց նաեւ Ս.Էջմիածին, ուր ընդունուեցաւ Վեհափառ Հայրապետին կողմէ, եւ ներկայ գտնուեցաւ այս առթիւ տեղի ունեցած եկեղեցական արարողութիւններուն: Ունեցաւ, անչուչտ հանդիպում նաեւ նորընտիր Ա.Քարտուղար Վ.Մովսէսեանի հետ, 30 պատուիրակութիւններու առընթեր:

Պրն. Յովսէփ Եուսէֆեանի վերադարձին, չահեկան հարցազրոյց մը ունեցանք իրեն հետ, զոր լոյս պիտի ընծայենք յաջորդիւ: Կ'արժէ ըսել, որ ան «Սարտարապատ» պաչտօնաթերթիս սիրուած, յարգուած ու ընտրանի բարեկամներէն է:

Սոյն միջազգային գիտաժողովին կը մասնակցէին 16 տարբեր երկիրներէ եկած պատուիրակութիւններ: Տեղի ունեցան 80-է աւելի զեկուցումներ, որոնցմէ՝ աւելի քան 20-ը ոչ-հայ գիտնականներու թէ պատմագէտներու կողմէ:

Գիտաժողովին աւարտին՝ Շաբաթ, Ապրիլ 21-ին, կենտկոմի նորընտիր (Ապրիլ 6-ին) Ա.Քարտուղար՝ Վ.Մովսէսեան ընդունեց կենտկոմի ընթարճակ հիւրասրահին մէջ արտասահմանի աւելի քան 30 պատուիրակութիւններ 1,30 ժամ տեւողութեամբ:

Մովսէսեան ունեցաւ ելոյթ մը, եւ հարցազրոյց պատուիրակութիւններուն հետ, որմէ կու տանք ամփոփաբար հետեւեալ գլխաւոր գիծերը.

Հայ Ցեղասպանութիւն

• Մովսէսեան լաւ գիտէ հայ ցեղասպանութեան պատմութիւնը, ոչ միայն հայոց պատմութենէն, այլեւ իր ծնողաց (Արեւմտահայաստանէն ներգաղթած, Վան, Մուչ ու այլ մօտակայ չրջաններէն) ականատեսի վկայութիւններէն ու ոգեկոչումներէն:

• Հայ ցեղասպանութեան վերաբերող փաստաթուղթերը-վաւերագիրերը մօտ ատենէն պիտի թարգմանուին միջազգային 5 գլխաւոր օտար լեզուներու:

• Հայ ցեղասպանութիւնը՝ անժամանցելի, չոչափելի ու անհերքելի իրողութիւն է, որ կը չարունակուի այսօր «Սումկայիթով» ու «Պաքու»յով: Ատրպէյճանէն տեղահան եղած հայերուն թիւը կը հասնի 250 հազարի:

Երկրաչարժ

• Երկրաչարժը խլեց 25 հազար զոհ, ու անպատասպար թողուց աւելի քան 500 հազար հոգի:

• Հայրենի 3,5 միլիոնէն, 1,5 միլիոնը սեփական տուն չունի ուստի անժամկէտ փոքր տարաձութեամբ հող եւ վարկ (crédito) պիտի տրամադրուին ժողովուրդին թէ՛ սեփական տնտեսութիւն եւ թէ բնակարաններ հայթայթելու նպատակով:







Նորընտիր Ա.Քարտուղար՝ Վ.Մովսէսեանը կը խօսի գինք այցելող պատուիրակներուն:



Ցուզիչ եւ պերճախօս տեսարաններ Սրօեռապաբերդի ճաճատակաց յուշարձանին առջեւ, ծաղկեփունջերով շրջապատուած:

(Շար.Ը էջ)

Ապրիլ 24-ի Սգոյ Հանդէս Մարի Մանուկեան Հաստատութեան Մէջ

Այս տարի հայոց Մեծ Եղեռնի 75-ամեակն էր: Մեր բիւրաւոր նահատակներուն ուրուականները մեր կեանքին կ'ուղեկցին արդէն 75 տարի:

Արդարութի՞ւն եւ հատուցո՞ւմ կը պահանջեն վերապրողներն ու անոնց շառաւիղները, սակայն աշխարհը դեռեւս խուլ է...

Այս մտածումներով ու զգացումներով Մարի Մանուկեան Հաստատութիան յարկին տակ հաւաքուած էին ծնողք ու աշակերտ՝ վերյիշելու մեր բիւրաւոր նահատակները:

Բացման խօսք կ'ըսէ ուսուցչուհի տիկ. Հիլտա. «Սիրելի՛ աշակերտներ, սիրելի՛ հայրենակիցներ, Ապրիլ ամիսը սովորականէն աւելի իմաստ մը ունի հայերուս համար: Ասկէ ճիշդ 75 տարի առաջ, 1915-ին բարբարոս թուրքը ցեղասպանութիւն գործադրեց մեր ժողովուրդին դէմ, քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը, որուն զոհ գացին մէկ-երկու միլիոն հայեր...

Այս օրերուն Ատրպէյճանի մէջ թուրքերուն ցեղակից ազերիները ծեռով նման ցեղասպանութիւն մը կը գործադրուի մեր ժողովուրդին հանդէպ: Նորէն մեր դէմ է մեր դարաւոր թշնամին...

Անցաւ 75 տարի, մեր ժողովուրդը մասամբ բուժեց իր վէրքերը, վերստին ծաղկեցաւ հայոց ծառը, պետականութիւն, հայրենիք ունեցանք եւ վերապրումի յամառութեամբ ապացուցեցինք որ հայը չի մեռնիր: Ինչպէս կ'ըսէ Պարոյր Սեւակ. «Կանք: Պիտի լինենք: Ու դեռ շատանանք»:

Հաւաքուած ենք աշակերտներու ուժով փոքրիկ սգոյ հանդէս մը ընելով՝ մեր յարգանքը մատուցելու մեր զոհերուն, որոնք նահատակուեցան, մարտիրոսացան, բայց հաւատարիմ մնացին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի եւ Սահակ-Մեսրոպի աւանդութիւններուն:

Ցիշատակի արդարոց օրհնութեամբ եղիցի:»

Սրահին մէկ անկիւնը մեր բիւրաւոր նահատակներուն շիրիմները խորհրդանշող սեւածածկ պատուանդանին աշակերտները ծաղիկներ կը դնեն:

Սրահ կը մտնեն դրօշակակիրները: Կը հնչեն Արժանթինի Հանրապետութեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի քայլերգները: Խորհրդաւոր է պահը... Լռութիւն, երկիւղածութիւն եւ յարգանք...

Այս մթնոլորտի մէջ հոգեպարար երաժշտութիւն մը կը հնչէ. հայրենաբնակ շնորհաշատ ջութակահար Հրաչեայ Ցովհաննիսեան կը նուագէ Կոմիտաս Վարդապետի «Միրանի Ծառ» եւ «Կռունկ» ստեղծագործութիւնները:

Օրուայ խորհուրդի մասին խօսք կ'ըսէ դոկտոր Սամուէլ Անթոսեան: Ստորեւ կու տանք իր խօսքը.

«1021-էն սկսեալ երբ սելճուք Տուղրիլ պէկը յարձակեցաւ Հայաստանի վրայ, 970 տարի շարունակ մեր ժողովուրդը կրեց թրքական զանազան ցեղերուն լուծը: Իրարու յաջորդող թուրք ցեղերը հայ մարդոց գանկերէն բլուրներ շինեցին եւ յագեցուցին իրենց արեան ծարաւը:

Հայերուս համար յատկապէս ազէտալի եղաւ Օսմանեան կայսրութիւնը, որը ոչ միայն տիրացաւ մեր պատմական հողերուն, այլ թուրքերու մէջ ազգային եւ կրօնական ատելութիւն սերմանեց հայերու հանդէպ: Մահմետական կրօնքը՝ իսլամը դրօշով դարձնելով՝ թուրքերը դարեր շարունակ *կեանքի* անհաւատ արհամարհական ու նուաստացուցիչ ածականով կը կոչէին հայերը:

19-րդ դարուն, ազգերու ընդհանուր զարթօնքին ներդաշնակ, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերը կ'արթննան դարաւոր թմրութենէն, կը պահանջեն իրենց ազգային իրաւունքները յարգել: Արիւնոտ Սուլթան Համիտը 1876-էն սկսեալ մինչեւ 1908 զանազան պատրուակներով հայկական գաւառներուն մէջ ջարդեր կը կազմակերպէ՝ մի քանի հարիւր հազար հայ անմեղներուն արիւնով ներկելով կիրպէ՝ մի քանի հարիւր հազար հայ անմեղներուն արիւնով ներկելով իր երկիրն ու իր անունը:

1908-ին Երիտասարդ Թուրքերը կը տապալեն Համիտը: Պահ մը կը թուի որ Թուրքիան պիտի յարգէ իրաւունքները: Ազգովին կը խարուինք: Իթթիհատ կուսակցութեան գաղտնի ժողովներու ատեն կը ծրագրուի հայ ազգի բռնաջնջումը: Առաջին Աշխարհամարտը կարելի կը դարձնէ այդ ոճրագործումը: Թուրքիան կը պատերազմէր Ռուսիոյ դէմ: Ռուսական բանակին մէջ հայ զինուորներ կային. իրենք կրնար պարտ ծրագիրին իրագործումը: Թուրքիան կը պատերազմէր Ռուսիոյ դէմ: Ռուսական բանակին մէջ հայ զինուորներ կային. իրենք կրնար հայութիւնը *սահմանամերձ* շրջաններէ հեռացնել: Իրականին մէջ հայութիւնը սահմանամերձ շրջաններէ հեռացնել: Իրականին մէջ «ոտնձգութիւն» անուան տակ հրահանգուած էր իրագործել հայ տարրի ամբողջական բնաջնջումը: Այդ օրերու գաղտնի փաստաթուղթերը այսօր հայութեան սեփականութիւնն են եւ անառարկելի փաստեր: Հոն գրուած է. «*Միութիւն եւ Յառաջդիմութիւն*» (Իթթիհատ) կուսակցութեան կոմիտէն, ինչ որ ալ ըլլայ, նպատակ ունենայ (հայ) կուսակցութեան կոմիտէն, ինչ որ ալ ըլլայ, նպատակ ունենայ ոճրագործութիւնը, ինչպէս որեւէ տեղ եւ որեւէ ձեւով հայկական հարցի առաջադրութիւնը կ'ենթակայ որեւէ տեղ եւ որեւէ ձեւով հայկական հարցի առաջադրութիւնը, զոր մեզի ընձեռած է պատեհ, օգտուելով այն ազատութիւններէն

«Տարբեր Ես Դուն Մեր Երազէն...»

Գրեց՝ Երուանդ Ազատեան

Այստեղ եւս մեր ժողովուրդին համար ուսանելի բազմաթիւ դասեր պարզուեցան. մանաւանդ՝ մեր վճռակամութիւնը կոփելու անօրինակ առիթներ:

Առաջին հերթին Ամերիկայի մէջ միասնական կերպով ու միեւնոյն նպատակին համար պայքարելու սակաւաթիւ առիթներէն մէկը վկայեց ամերիկահայութիւնը: Քաղաքական հազուագիւտ մարզանք մը որ մեզ պիտի վարժեցնէ քաղաքական աւելի մեծ ճակատներու:

Երկրորդ, որոշումնագրին բանաձեւը սարսափ մատնեց թրքական պետութիւնը որ հարկադրուեցաւ միլիոնաւոր տոլարներ ծախսելով լոպիինկ կատարելու եւ խափանել փորձելու ճշմարտութիւնը: Սթրազպուրկի մէջ Եւրոպական խորհրդարանի քուէարկած որոշումը շատ սուղի նստած էր Թուրքիոյ՝ արգելակելով անոր մուտքը Եւրոպական Հասարակաց Շուկայէն ներս: Թուրքիա պիտի դիմէր ամէն արտօնելի եւ ոչ արտօնելի միջոցի՝ կրկնել չտալու համար Եւրոպական Խորհրդարանի որոշումը: Հետեւաբար ան վարձեց ծախու «գիտնականներ», եւ զօրաշարժի ենթարկեց լոպիինկի ընկերութիւններ եւ թրքական պետութիւնը իր տգեղ դէմքը ցոյց տուաւ, սպառնալով ամերիկեան ռազմախարիսխներուն եւ Ամերիկայի կենսական շահերուն: Իսկապէս... «բարեկամական» արդար վերաբերում:

Հաստատուեցաւ անգամ մը եւս թէ մէկ ու կէս միլիոն հայ նահատակներու անթաղ դիակները աւելի ահաւոր սարսափ կը պատճառեն Թուրքիոյ՝ քան պիտի պատճառէր միեւնոյն թիւով զինեալ հզօր բանակ մը:

Ուրեմն, մեր մեռելները աւելի արթուն էին, աւելի կենդանի՝ այդպիսի զարհուրանք մը պատճառելու իրենց դահիճներուն:

Այո, ճիշտ է թէ կորսնցուցինք քուէարկութիւնը, սակայն շահեցանք ճիշդ այն ինչ կը փորձէինք իրականացնել քուէարկութեան յաջողութեամբ:

Արդարեւ, ի՞նչ էր նպատակը որոշումնագրի որդեգրումին՝ եթէ ոչ ծանօթացնել հայոց կրած ցեղասպանութիւնը աշխարհին: Եղեռնէն ի վեր լռութեան դաւադիր պատ մը հիւսուած էր հայոց ցեղասպանութեան շուրջ՝ աշխարհը անտեղեակ պահելով այդ ահաւոր ոճիրէն եւ պարտադրելով որ հայ ժողովուրդը առանձինն սգար իր մխացող վէրքերը:

Տասներկու ժամուան բուռն վիճաբանու...ները հայոց ցեղասպանութեան մասին եւ անոնց հեռասփռումին հետեւող խմբագրականներն ու յօդուածները Նիւ Եորք Թայմզի, Ուաշինկթըն Փոստի, Լոս Անճելըս Թայմզի եւ այլ կարեւոր թերթերու մէջ բաւարար եղան քանդելու լռութեան պատը եւ վար առնելու Թուրքին «քաղաքակրթական» դիմակը:

Բոլոր թերթերն ալ ջանացին առարկայականօրէն ներկայացնել պարզուող տեսակէտները եւ այդ իսկ ընելով ծանօթացուցին հարցը հանրութեան, խորտակելով լռութեան պատը: Նոյնիսկ այս առիթով մոռցուեցաւ ամերիկեան Պետական Քարտուղարութեան դիւանակալութեան անցքերուն մէջ յօրինուած «ենթադրեալ ցեղասպանութեան» «ենթադրեալ» բացատրութիւնը. եւ հանրութիւնը լայնօրէն լուսաբանուեցաւ հայոց ցեղասպանութեան շուրջ: Թուրքիան պաշտօնապէս դատապարտելու կարիքն անգամ երկրորդական դարձաւ՝ քանի անոր պաշտպաններուն ծիծաղելի բացատրութիւններով աւելի եւս համակրանքը յարեցաւ հայոց կողմը:

Ամէն հայ պարտականութիւնն ունի յատուկ... շնորհակալութիւն յայտնելու Թուրքիոյ, որ հսկայ գումարներ ծախսելով խօսուն բեմադրութեան մը վերածեց այս պայքարը, աւելի եւս ծանօթացնելով իր ցեղասպանութեան արարքը: Աւելի քան 12 ժամ տեւող վիճաբանութիւնը ծերակոյտի մէջ, անփոխարինելի դասընթացք մը հանդիսացաւ քաղաքագէտներուն եւ ամերիկեան հանրային կարծիքին համար: Դասընթացք մը, որ երկար ատեն պիտի չմոռցուի:

Մենք որ ամէն կորսուած ճակատամարտէ ետք մեր տարած «բարոյական յաղթանակներով» մխիթարուելու առհաւական սովորութիւնն ունինք՝ այս անգամ իրական յաղթանակ մը տարինք: Եթէ Թուրք պետութիւնը այսքան բուռն կերպով չպայքարէր որոշմնագրին դէմ, այնքան վէճ եւ այնքան փաստարկութիւններ հրապարակ հանելու առիթը պիտի չստեղծուէր: Ծերակուտական Տոլ այնքան խորունկ կերպով պատրաստած էր իր թեզը եւ զայն այնպիսի ճարտարութեամբ եւ համոզումով յառաջ տարաւ որ հակառակորդներն անգամ հարկադրուեցան իրենց հիացումը յայտնելու անոր ճարտասանական կարողութեանց եւ համոզումներու խստութեան մասին:

Միւս կողմէ ծերակուտական Պըրտ ուրիշ առարկութիւն չունէր բացի այն քանի մը մաշած պատճառաբանութիւններէն զորս Թուրքիոյ վարձած լոպիինկի ընկերութիւնները հնարած էին իրենց համար, թէ՝ «Թուրքիա դաշնակից անտեղեակ թմբկահարներուն համար, թէ՝ «Թուրքիա դաշնակից մըն էր եւ պէտք չէր զայն վշտացնել»: (Թէեւ Ծերակուտական Տոլ հարց տուաւ որ ուրեմն, եթէ դաշնակից չըլլար Թուրքիան՝ պիտի ընդունէի՞ն անոր ցեղասպան արարքը) թէ «Թուրքերը Քորէայի մէջ քաջարար կռուած էին» թէ՝ «Թուրքիա կրնար խափանել իր հողամասին վրայ գտնուող Ամերիկեան ռազմախարիսխները», եւն.

Ծերակուտական Պըրտ եթէ աւելի բարձր ճաշակ մը ունենար՝ տարբեր նուէր մը կրնար հրամցնել իր Թուրք փեսային, մէկ ու կէս միլիոն հայ նահատակներէն աւելի հաճելի բան մը...

Այս եւ նման շինծու պատճառաբանութիւններ ոչ միայն չկրցան հերքել ցեղասպանութեան արարքը, որովհետեւ ոչ մէկ կապ ունէին այդ ճշմարտութեան հետ, այլ անուղղակիօրէն եկան հաստատել պատմական ճշմարտութիւնը:

Ծերակոյտի մէջ պարզուեցաւ հետաքրքրական եւ աննախադէպ երեւոյթ մը, երբ գեր-պահպանողական Ճեսի Հէլմզի եւ ազատական Քարլ Լեւինի պէս յատենական հակառակորդներ, իրենք զիրենք գտան հայկական ցեղասպանութիւնը փաստարկող կողմին վրայ:

Ամէն անգամ որ յիշեցում կատարուեցաւ Նախագահ Պուշին, որոշումնագրին նկատմամբ իր ստանձնած յանձնարութեան մասին՝ անոր ներկայացուցիչները անուղղակիօրէն մօտեցան հայկական կազմակերպութեանց ղեկավարներուն, փորձելով զանոնք համոզել որ յօժարէին զանց առնել «ցեղասպանութեան» յիշատակութիւնը. (Նոյնիսկ խոստումներ կատարուեցան Հայաստանի երկրաշարժի աղէտեալներուն աւելի առատաձեռն օժանդակութիւն կատարելու «ցեղասպանութիւն» բառին զանցումին հաշւոյն...)

Բոլոր այն հայերը որ այդպիսի հարցադրումի մը առջեւ գտնուեցան, -առանց յաճախ իրարմէ տեղեակ ըլլալու- վճռականապէս մերժեցին առաջարկը, այն տրամաբանութեամբ որ նախընտրելի էր ցեղասպանութեան փաստը պահել մէջտեղ, հակառակ որ ամերիկեան պետութիւնը պատրաստ եղած չըլլար զայն ընդունելու:

Բազմակի յիշեցումներէ ետք նախագահ Պուշ ի վերջոյ յօժարեցաւ ընդունիլ որոշմնագրին մէջ «ցեղասպանութիւն» բառին գործածութիւնը:

Սակայն, որոշմնագիրը զոհ գնաց թրքական յամառ լոպիինկի եւ անզիջողութեան:

Եթէ Թուրքերը դիտեցին ծերակոյտի երկարատեւ վիճաբանութիւնները եւ ապա նաեւ ամերիկեան գլխաւոր թերթերու յօդուածները, անպայման անոնց աչքէն չվրիպեցաւ ցեղասպանի այն դիմագիծը, որ անգամ մը եւս ուրուագծուեցաւ լրատու օրկաններու մէջ:

Եթէ վէճը այսքան չծաւալէր՝ անկարելի էր որ ցեղասպանութեան հարցը այսքան լայն ուշադրութեան արժանանար եւ այսքան լայն տարածում գտնէր մամուլի էջերուն մէջ:

Ուրեմն, Թուրքերուն ալ անուղղակի օգնութեամբ, քուէարկութեան այս փորձը լիովին ծառայեց իր նպատակին. թէեւ տակաւին չունինք Թուղթի կտոր մը որ յարգանք ընծայէր մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, սակայն, վաստկած ենք աւելի լուսաբանուած հանրային կարծիք մը, որուն ուղղուած պիտի ըլլար արդէն այդ որոշմնագիրը:

Քուէարկութիւնը կորսնցուցինք. սակայն, լուսաբանման պատերազմը շահեցանք:

Ուրեմն, տեղին է անգամ մըն ալ բանաստեղծին հետ կրկնելու՝ «Տարբեր ես դուն մեր երազէն... աւելի լաւ»:

(Ծար. եւ Վերջ)

Նուիրատուութիւն

Ողբացեալ Վահէ Զրնոզեանի մահուան երրորդ տարելիցին առիթով, այրին՝ Տիկ. Տորիս Զրնոզեան կ'ընէ հետեւեալ նուիրատուութիւնները.

Վահէ Զրնոզեան Հիմն. «Վահէ Զրնոզեան ուսուցչանոցին»՝	A 1.000.000
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթ. Հաստատութեան, «Գէորգ Զրնոզեան Երկրորդականին»՝	A 1.000.000
Մարի Մանուկեան Կրթ. Հաստատութեան, «Տորոս Զրնոզեան Երկրորդականին»՝	A 1.000.000
Խրիմեան Կրթ. Հիմնարկութեան՝	A 1.000.000
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին՝	A 1.000.000
Հ.Օ.Մ.-ի Յ. Տիարպէքիրեան Հանգստեան Տան՝	A 250.000
«Արմենիա» օրաթերթին՝	150.000
«Սարտարապատ» շաբաթաթերթին՝	150.000

Ողբացեալ Վահէ Զրնոզեանի մահուան երրորդ տարելիցին առիթով գաւակները կը նուիրեն, Վահէ Զրնոզեան Հիմնարկութեան «Վ. Զրնոզեան» ուսուցչանոցին՝

«Դա Մեր Հոգու, Մեր Սրտի Արձագանգն է Ու Սէրը Հայերի Հանդէպ», Կ'ըսէ Ռոսթրոփովիչ

Հայաստանի, հայ երաժշտութեան հետ աշխարհահռչակ թաւջուզիի կալինա Վիշնեւսքայայի ունեցած կապերի մասին մամուլում սփռուած շատ տեղեկութիւններ կան, որոնք արդիւնք են շատ փոխադարձ այցելութիւնների, փոխադարձ հանդիպումների, իրենց դասարաններում հայ ուսանողների հետ պարապմունքների, հիւրախաղերի: Նրանք քանիցս եղել են Հայաստանում, իսկ վաթսունական թուականների կէսերին այստեղ դարձել են «Պրոթթենեան երաժշտական օրեր» փառատօնի նախաձեռնողները: Այդ շրջանում էր, որ փառատօնից առաջ մէկ ամիս Ռոսթրոփովիչը, Վիշնեւսքայան, անգլիական մեծ կոմպոզիտոր Պենժամին Պրիթթենը եւ նրա երգերի անզուգական կատարող Փիթըր Փրոսը մէկ ամիս հանգստացան եւ աշխատեցին Դիլիջանում, ԽՍՀՄ կոմպոզիտորների Միութեան ստեղծագործական տանը: Այստեղ էր, որ Պրիթթենը գրեց իր «Փուչքինեան Վոկալ Շարք»ը, զայն նուիրելով Վիշնեւսքայային, որը եւ այդ գործը Ռոսթրոփովիչ–դաշնակահարի նուագակցութեամբ կատարեց Արամ Խաչատրեանի անուան մեծ համերգասրահում: (Ի դէպ այդ համերգին չատերի թուում ներկայ էր նաեւ Մարտիրոս Սարեանը, որն իր «Արեւուտ օր» անունով մի կտաւ նուիրեց Պրիթթենին:)

Հայաստանի ու հայերի հանդէպ յարգանքի արտայայտութիւն դարձաւ Ռոսթրոփովիչի նախաձեռնութիւնը երկրաշարժից տուժած Հայաստանին օգնութեան գործում: Այդ մասին նա վերջերս պատմել է Մոսկուայում իր ունեցած հիւրախաղերի օրերին, երեւանից այնտեղ մեկնած հայ երաժիշտների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Այդ հանդիպման տեսագրութիւնը օրերս ներկայացրեց հայկական հեռուստատեսութիւնը:

—Սովետական Միութիւնից մեկնելուց յետոյ անցած տասնըվեց տարիների ընթացքում սա մեր առաջին հարցազրոյցն է, որ տալիս ենք խորհրդային պաշտօնական օրկաններին,– իր զրոյցն այնպէս սկսեց նա: —Այդ ընթացքում մենք մեր հայրենիքի մամուլի ներկայացուցիչների հետ ոչ մի կապ չէինք ունեցել, պատճառաբանելով, որ «ժողովրդի թշնամիներ»ի դիրքերից մենք չենք կարող խօսել մեր ժողովրդի հետ:

Երբ լսեցի Հայաստանին հասած ծանր դժբախտութեան լուրը, այդ ժամանակ ես Լոնտոնում էի, անմիջապէս գնդագհարեցի ուր որ հարկն էր ու ասացի՝ վաղը չէ միւս օրը ես համերգ պիտի տամ Հայաստանի համար, պիտի նուագեմ Պախ Թաւջութակի սուիթը (մենակատար): Ինձ հարցրին, թէ արդեօք կարո՞ղ եմ երկու օրում ունկընդիր հաւաքել, ասացի՝ կարող եմ: Համերգի օրը հսկայական զահլիճը լիքն էր: Ահա, այսպէս, երկրաշարժի երկրորդ օրը կալինայի հետ գործի անցայ, որ օգնեմ հայ ժողովրդին: Դա չսահմանափակուեց միայն համերգ տալով: Նախագահ Ռեյկընի եւ նախագահ Կորպաչեւի մի հանդիպման ժամանակ, որին հրաւիրուած էինք ես եւ կալինան, նախագահ Կորպաչեւը մի ռուսական ասացուածք ասաց՝ վստահիր, բայց ստուգիր: Դա ես յիշեցի, եւ մենք ստուգեցինք նաեւ, թէ ինչքան գումար է գոյացել, ո՞ր հասցէով պիտի ղրկէ, ո՞վ պիտի ուղարկի եւլն.:

Ասեմ որ, կալինան չորս տարի է՝ չի երգում, եւ այդ չորս տարուայ ընթացքում միայն մի բացառութիւն է արել, Լոնտոնում ինձ հետ մասնակցելով այն բարեգործական համերգին, որից գոյացած միջոցները տրամադրուել են Հայաստանի օգնութեան ֆոնտին: Կարծում եմ, որ այնքան էլ հեշտ չէ զգալի ընդմիջումից յետոյ բեմ գալ, երգել Լոնտոնի խստապահանջ ունկնդիրների առջեւ: Դա էլ, երգել Լոնտոնի խստապահանջ ունկնդիրների առջեւ, մեր չիտաթոյլ տուէք ասել մեր հոգու, մեր սրտի արձագանգն է

De Café y Medialunas

Cuando el pueblo turco superó en parte sus problemas internos, en los comienzos del siglo XVII, trató de volver a la práctica de conquista o, más bien, de dominio de países, demostrando una vez más su espíritu expansionista y opresor.

Dispuesto el sultán Mohamed IV, en el mes de mayo de 1963, tratando de emular a Suleiman El Magnífico, partió con una ambiciosa expedición compuesta por 300.000 hombres obedientes, adiestrados para luchar o morir. Otra inquietud hizo que el sultán dispusiera la movilización de más de 100 vehículos para transportar su harén, que lo acompañó en la aventura.

Al frente, el estandarte del profeta; le seguía Gara Mustafá.

Avanzaron hasta la ciudad de Viena, a la cual sitiaron. Leopoldo I de Habsburgo, el calmo emperador austriaco, sabía del peligro que representaban los turcos, desde siempre, por lo que el monarca envió al duque Carlos de Lorena como general en jefe del ejército imperial —¡que contaba con sólo 24.000 hombres!— para romper el sitio. El momento era dramático, y hasta el más superficial de los vieneses se convirtió en leal guardian de su amada ciudad.

Durante la noche del 9 al 10 de setiembre los panaderos, que se encontraban trabajando, —según algunos historiadores— fueron los que dieron la voz de alarma cuando cerca de sus hornos, oyeron a los turcos golpear los túneles construidos bajo los muros de defensa de la ciudad. Los confiteros alertaron de esos avances al ejército que, valientemente, hizo frente al invasor, pese a su inferioridad numerica. La batalla se decidió prontamente a favor de los austriacos, aunque dejo a la valiente ciudad herida pero orgullosa ante el desbande desordenado de los otomanos, que huyeron humillados.

Las opiniones difieren. Algunos dicen que esa madrugada se hornearon por primera vez las riquísimas medialunas, otros opinan que Leopoldo I dió autorización legal para hacerlas. Pensamos que el pueblo, en tiempo de convulsión, apela a su ingenio, y los pasteleros vieneses no encontraron mejor modo de unirse al júbilo —ya lo habían hecho para unirse al triunfo— que idear masas en forma de medialuna, como las que llevaba el invasor en sus estandartes.

En su atropellada huída los turcos, entre otros elementos, olvidaron gran número de bolsas conteniendo granos de café que fueron obsequiadas a un polaco por los servicios prestados al ejercito, y como éste había vivido en Constantinopla, conocía esta infusión a la que comenzaron a llamar "sopa negra".

Un estudio hecho por Gerhard H. Oberzill, en Viena, hace pocos años, afirma que un armenio llamado Diodato fundó la primera cafetería en la Viena imperial; tras él llegaron otros connacionales que lo imitaron y poblaron la ciudad de reductos en los que se podía leer los periódicos, jugar una partida de billar, tal vez saborear exquisitas medialunas acompañando humeante café, favorito de los vieneses.

A más de 300 años del sitio de Viena por los turcos, en la más elegante —o más sobria— cafetería se mantienen fieles al adagio oriental: **"El café debe ser negro como la noche, dulce como el amor y quemante como el infierno".**

Jazmín María Harutiunian de Huttner

COCINA



Isabel Tchalian

LAS RICAS MEDIALUNAS

Disuelva 50 gramos de levadura de cerveza y 1 cucharada de azúcar, en 1/3 de taza de leche tibia. Cuando la mezcla empiece a crecer, échela en un bol en el que previamente habrá mezclado 6 cucharadas de azúcar, 1/2 cucharadita de sal, la ralladura de un limón, 100 gramos de manteca blanda, 2 huevos a temperatura ambiente. Una vez lograda esta mezcla agregarle 2 tazas de harina, trabajando toda la mezcla vigorosamente hasta obtener una masa elastica que no se pegue en las manos.

Dejar levar, luego estirar con palote y cortar cuadrados de 10 centímetros con 1/2 centímetro de espesor.

Arrolle el cuadrado en triángulo, desde la base hasta el vértice y arque cada rollito dándole forma de medialuna. Distribuya cada pieza en placas enmantecadas. Tape las medialunas con polietileno y déjelas hasta que estén bien hinchadas.

Cocínelas a horno moderado. Al retirarlas del horno, píntelas con almíbar

Novedades Musicales

Sarkis Kabadian

ARAM KACHATURIAN

El programa que por LRA.1 conforma y dirige con singular calidad el conocido locutor de nuestro medio, señor Suárez Castro, ha rendido Homenaje a la personalidad y la obra de este insigne compositor armenio. Esto ocurrió el martes 1º de mayo, en el horario de las 18 horas por dicha emisora, oportunidad en que se pudieron evocar sus mejores realizaciones, con motivo del 12º aniversario de su desaparición.

Genio Armenio en el Colón

Iniciando la temporada musical 1990 se presentó en el Salón Dorado de nuestro Primer Coliseo, un excepcional violinista armenio que, sin duda, está llamado a ser uno de los grandes en el dominio de este difícil instrumento. Su nombre es Jrachia Harutiunian y, con sólo 27 años de edad, es alumno aventajado del Conservatorio Menuhin, de Suiza.

En esta oportunidad se presentó acompañado por el maestro argentino Alberto Lysy, secundado en el piano por otra aventajada alumna de dicho Conservatorio, la señorita Isabelle Trub, de origen suizo.

El programa de este recital se inició con la "Sonata para Violín y Piano de César Franck", continuando luego con una interpretación magistral de la "Rapsodia para violín y piano", de Eduard Bagdasarian, continuando "Poema para violín y piano", de E. Chausson, obra de gran dificultad para este instrumento, pero que nuestro artista supo resolver con gran técnica y singular maestría, cosechando grandes y merecidos aplausos.

El público, que colmaba la pequeña sala, aplaudió calurosamente, de modo que el artista no pudo negarse al bis, siendo ése el momento en que nos regaló la inmortal página del Rev. Padre Gomidás "Grounk", que repitió los aplausos hasta que el maestro se retiró de la escena.

Orquesta Filarmonica de Moscú

El 11 de abril tuvimos el privilegio de escuchar a la mundialmente famosa Orquesta Filarmónica de Moscú que, con el auspicio de la Fundación Coliseum y del Grupo Harmonía, se presentó en el Teatro Coliseo bajo la dirección del Maestro Dimitri Kitaenko.

Este Conjunto Orquestal, que viene de cumplir una extensa gira por los Estados Unidos de Norteamérica, tiene como solista de piano a Vladimir Kraimer, uno de los más famosos pianistas de la actualidad. También integran el Conjunto tres músicos armenios, cuales son Gregori Yeguizarian (cello), Robert Devoian (contrabajo) y Tatiana Vartanian (arpa).

El programa se inició con "Una Noche en el Monte Calvo", la exquisita composición de Mussorgsky y el "Concierto Nº1 para piano y orquesta de Peter I. Tchaikowsky.

En la segunda parte pudimos deleitarnos con la preciosa "Sinfonía Nº 5", de Dimitri Shostakovich.

Tres fueron las brillantes presentaciones de la Orquesta en el Coliseo, cuyos integrantes partieron luego para Brasil y los Estados Unidos.

Tanto en este concierto como en el de Harutiunian, debimos lamentar una vez más la ausencia —yo diría total— del público armenio, que entiendo debiera concurrir en forma masiva para alentar al artista que nos brinda su talento y su arte y que, recorriendo 20.000 kilómetros de distancia, desea conectarse con sus connacionales. Asimismo, entiendo que los medios armenios de difusión, sean escritos o radiales, debieran hacerse amplio eco de estos eventos artísticos para mantener informada a la audiencia.

LILIANA M.M. MERDIKIAN
abogada
Ricardo Gutierrez 1357
Pta. Baja "A" — OLIVOS
T.E.: 790—6779 de 14 a 18

Merceril S.A.
Larrea 237. Capital
T.E.: 48-9343

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2º Piso — Of. "K"
T.E.: 322—2768

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL TEKEYAN
Redacción y Administración
Gorriti 4804
1414 CAPITAL FEDERAL
T.E.: 771—2520
Horario de atención
Lun a Vier de 10.00 a 19.00
Registro Nac. de la Propiedad Intelectual
Nº 174428
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía-receptoría de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap 84
Cep. 00579—San Pablo
T.E: 813—6731
URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E: 70—3114 Montevideo